Հաստատում եմ՝

հիմք մանկավարժական
խորհրդի
31.08.2022թ.
Տնօրեն՝
Ն.Նիկոյան

# ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# Տ Ա Ր Ե Կ Ա Ն Պ Լ Ա Ն

# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարդկության գոյատևումն ու առաջընթացն ապահովող հիմնական գործոնը կրթությունն է: Հանդիսանալով քաղաքակրթության նվաճումների սոցիալական փորձի ու գիտելիքների փոխանցման ավանդական միջոց՝ այսօր կրթությունը միտված է առաջին հերթին մարդու հոգևոր արժեքների, հասարակական համակեցության, հանդուրժողականության, համագործակցային որակների զարգացմանը: Արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգի բոլոր կառույցների և օղակների, կրթական գործընթացի անմիջական մասնակիցների վրա՝ պայմանավորելով տարատեսակ խնդիրների առաջադրման և լուծման անհրաժեշտությունը: Նշված գործընթացների հետևանքով առավել կարևորվում է կրթության դերը, ծագում է կրթության շարունակականության ապահովման համապատասխան հիմքերի և միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը, որպեսզի մարդը հնարավորություն ունենա կրթվելու ողջ կյանքի ընթացքում:

Կրթությունը սահմանվում է սովորողների կողմից պետական կրթական չափորոշիչներով նախատեսված գիտելիքների յուրացում, ինչպես նաև որակյալ կրթության ապահովում, որպես անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն: Ահա այս նկատառումներով էլ Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան հ4 հիմնական դպրոցն իր աշխատանքի գլխավոր նպատակն է համարում երեխաների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը, որի համար էլ առաջարկվում է աշխատանքային տարեկան պլան, կախված համաճարակային պայմաններում իրականացվող աշխատանքներից՝ առաջնորդվելով պատկան մարմինների ցուցումներով:

## ԲԱԺԻՆ
## Հիմնական պարտադիր կրթության իրականացում

| հհ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ամսաթիվ | Կատարող անձ |
|---|---|---|---|
| 1 | Հաշվառել համայնքի կողմից հաստատված տարածքի 2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ծնված երեխաներին, նրանց ընդգրկել ուսման մեջ: | օգոստոս | տնօրեն, /ՈՒԱԳՏ/, ուսուցիչներ |
| 2 | Հրամանագրել emis.am կայքում հայտագրված 1-ին դասարան դիմած երեխաներին օրենքով սահմանված փաստաթղթերով: | օգոստոս | տնօրեն, փոխտնօրեններ, ուսուցիչներ |
| 3 | Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից խուսափող սովորողների հետ և նրանց վերադարձնել դպրոց: | ուստարվա սկզբում, ընթացքում | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ |
| 4 | Դպրոցում օժանդակ պայմաններ ստեղծել սոցիալապես անապահով և անբարենպաստ ընտանիքների երեխաների համար: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ |
| 5 | Նպատակային օգտագործել նախատեսված, հաստատված բյուջեն /ֆինանսական միջոցներ բոլոր ուղղություններով/: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դպրոցի խորհուրդ, հաշվապահ |
| 6 | Խիստ վերահսկողություն սահմանել պարբերական ուշացողների և անհարգելի բացակայողների նկատմամբ և ժամանակին կանխել: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ |
| 7 | Ուշադրության կենտրոնում պահել ն/կ, դժվար դաստիարակվող, հոգեբանական խնդիրներ ունեցող, չառաջադիմող և երկտարեցի աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, դասղեկներ, դասվարներ |
| 8. | Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստումներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ |
| 9. | Ուսուցիչներին ցույց տալ մեթոդական օգնություն, հատկապես սկսնակ և սակավափորձ ուսուցիչներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Կազմակերպել սկսնակ և սակավափորձ ուսուցիչների հետ տարվող աշխատանքը, նրանց կցելով փորձառու և բարձր որակավորում ունեցող ուսուցիչներին: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ, մ/մ-ների ղեկավարներ |
| 11. | Սկսնակ ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ, խորհրդակցություններ: Այդ նպատակով հրավիրել նաև բարձրորակ մասնագետներ: | ուստարվա ընթացքում /հոկտեմբեր և ապրիլ/ | տնօրեն, ՈՒԱԳՏ ՄԿԱԳ |
| 12. | Ուսուցիչներին մշտապես հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին՝ կազմակերպել սեմինարներ, մանկավարժամեթոդական ընթերցումներ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳՏ |
| 13. | Ուսուցիչներին մշտապես ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳՄՍ նախարարի, քաղաքապետի հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:Ստեղծել մեթոդմիավորման օնլայն հարթակներ | յուրաքնչյուր ամիսը մեկ անգամ | տնօրեն, ՈՒԱԳՏ |
| 14 | Ստեղծագործող  ուսուցիչներին ընդգրկել մանկավարժական հետազոտական աշխատանքներում: Փորձի փոխանակում կատարել օնլայն | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՈՒԱԳ տնօրենի տեղակալներ |

## Մանկավարժական խորհրդի գործունեության պլանավորումը

| | |
|---|---|
| 1. | Մանկավարժական խորհրդի կազմի և քարտուղարի ընտրություն և հաստատում |
| 2. | Դպրոցի տարեկան ուսումնադաստիարակչական և միջոցառումների պլանի քննարկում և հաստատում |
| 3. | 2022-2023 ուստարվա կրթադաստիարակչական զարգացման ծրագիրը հաստատելու մասին |
| 4. | Ներքին կարգապահական կանոնների և աշխատակարգի քննարկում և հավանություն տալու |
| 5. | Հաստատության ուստարվա պլանի դասաբաշխման, դասարանների կոմպլեկտավորման մեթոդմիավորումների, դասղեկների խմբակի ղեկավարների նշանակում և հաստատում |

| | |
|---|---|
| 6. | Մ/Մ –ի կողմից դպրոցական ուսպլանի դպրոցական պարտադիր բաղադրիչի բաշխված ժամաքանակի հաստատում |
| 7. | 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի վերլուծություն |
| 8. | Ներքին գնահատման հաշվետվության ներկայացում |
| 9. | Սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդհանուր մակարդակը<br>/ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում/ |
| 10. | Առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլի աշխատանքների կազմակերպում/ առա<br>ԿԳՄՍՆ –<br>ի կողմից տրամադրվող ուղղեցույցով/ |
| 11. | Թեմատիկ զեկույց՝ << Արդյունավետ ուսուցում>> թեմայով |
| 12. | ԿԱՊԿՈՒ աշակերտների հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները |
| 13. | Անվճար դասագրքերի բաշխման և կորած դասագրքերի դուրս գրման հարցը |
| 14. | Էլեկտրոնային դասամատյաններում, ԿՏԱԿ-ի կողմից<br>տրամադրված հարթակներում կատարված աշխատանքների վերլուծություն |
| 15. | 1-ին կիսամյակում կատարված<br>ուսումնադաստիարակչական աշխատանքների<br>ամփոփում |
| 16. | Մ/Մ- րի նախագահների զեկույցը 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյ |
| 17. | 2022-2023 ուստարում ֆիզկուլտուրա առարկայից<br>ազատված աշակերտների ցուցակը և նրանց գնահատման կարգը՝ |
| 18. | Մեթոդական զեկույց՝<< Չափորոշչային ուսուցում և որակյալ կրթություն >> թեմայով |
| 19. | Դասացուցակի վերանայում |
| 20. | Էլեկտրոնային դասամատյաններում, ԿՏԱԿ-ի կողմից տրամադրված հարթակներում կատարւ<br>աշխատանքների վերլուծություն |
| 21. | ԿԱՊԿՈՒ աշակերտների ձեռքբերումները և դժվարությունները, նրանց կատարված կարիքի գնահատումը և խնդիրները |
| 22. | Մանկավարժահոգեբանական թիմի մասնագետների և ուսուցչի օգնականների կատարած աշխատանքների քննարկում |
| 23. | Մեթոդական զեկույց՝ <<Ուսումնական գործունեությունը, նրա կառուցվածքը և ձևավորումը<br>թեմայով |
| 24. | 9-րդ և 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգում և պետական ավարտական քննություննե<br>կարիքի ազատված ներառական կրթության ծրագրում ընդգրկված<br>աշակերտների հարցը |
| 25. | Էլեկտրոնային դասամատյաններում, ԿՏԱԿ-ի կողմից տրամադրված հարթակներում կա<br>աշխատանքների վերլուծություն: |
| 26. | Հայոց լեզու և գրականություն առարկայի կենտրոնացված ավարտական քննության, ավա<br>քննությունների, վերաքննությունների և 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման<br>մասսայականացում /ըստ ԿԳՄՍՆ-ի<br>կողմից տրամադրված ուղղեցույցի / |
| 27. | 120-200 ժամ և ավել բացակայություն ունեցող աշակերտների հարցը, քննությունների անցկացման կարգը, ժամանակացույցը /ըստ ԿԳՄՍՆ-ի կողմից տրամադրված ուղղեցույցի / |
| 28. | Ֆիզկուլտուրա առարկայից ԿԱՊԿՈՒ աշակերտների ազատման, 4-րդ դասարանի աշակերտնե<br>ստուգումից ազատման հարցը ըստ անհրաժեշտ փաստաթղթերի, վկայագրերի և<br>եզրակացությունների /ըստ ԿԳՄՍՆ-ի<br>կողմից տրամադրված ուղղեցույցի / |

| | |
|---|---|
| 29. | Ֆիզկուլտուրա առարկայի ավարտական քննությունների համար ստեղծել հանձնաժողովներ |
| 30. | ԿԳՄՍՆ նախարարի կողմից հաստատված կարգի համաձայն ստեղծել հանձնաժողովներ՝ 2022-2023 ուստարվա ավարտական քննությունների և գիտելիքների ստուգման համար |
| 31. | Էլեկտրոնային դասամատյաններում, ԿՏԱԿ-ի կողմից տրամադրված հարթակներում կատարված աշխատանքների վերլուծություն |
| 32. | Ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում |
| 33. | Մ/մ-ների ղեկավարների հաշվետվությունը ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ |
| 34. | Հաշվետվություն 2-րդ կիսամյակում կատարված կրթադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ |
| 35. | Քննարկել 2022-2023 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտման և փոխադրման հարցը |
| 36. | Հաշվետվություն ավարտական քննական առարկաների նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ |
| 37. | Ներառական կրթության աշխատանքների արդյունքների ամփոփում |

## *Հերթական և արտահերթ նիստեր*

Մի քանի նիստերում քննարկել ուստարվա ընթացքում բացակայությունների պատճառով քննություններ հանձնողների, այլ քննությունների ամփոփման, ավարտական դասարաններում ֆիզկուլտուրայի քննությանը թույլատրելու, արդյունքներն ամփոփելու մասին հարցերը: Անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ նիստեր, այդ թվում քննարկել նոր ուստարում աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին հարցերը:

## **ՈՒսուՄնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում**

| **հ/հ** | **Աշխատանքի բովանդակությունը** | **Կատարման ամսաթիվ** | **Կատարող անձ** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով : | ուստարվա սկիզբ | տնօրեն, ՈՒԱԳՏ |
| 2 | Աշխատանք տանել կաբինետները անհրաժեշտ նյութերով, պարագաներով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ, ՄԿԱԳ, ՏԱԳՏ |
| 3 | Աշակերտներին ապահովել դասագրքերով | ուստարվա սկիզբ | ՄԿԱԳ գրադարանավար |
| 4 | Կազմակերպել անսարք սարքավորումների վերանորոգում և դնել դրանք գործածության մեջ: | ուստարվա ընթացքում | ՏԱԳՏ |
| 5 | Կազմակերպել ուսուցիչների տեխնիկական ուսուցումը դպրոցում, հատկապես համակարգչի իմացության առումով: | 1-ին կիսամյակ | ՈՒԱԳՏ , համակարգչային կաբինետի ղեկ-եր ՄԿԱԳ |
| 6 | Բարձրացնել ուսպլանով նախատեսված առարկաների դասավանդման արդյունավետությունը: | 1-ին կիսամյակ | ՈՒԱԳՏ ՄԿԱԳ համակարգչային կաբինետի ղեկավար |
| 7 | Ներառական կրթությունը արդյունավետ անցկացնելու համար թիմին և աշակերտների ապահովել անհրաժեշտ պարագաներով, դիդակտիկ նյութերով և դրանք ախտահանել յուրաքանչյուր պարապմունքից հետո: | ուստարվա ընթացքում | բ/թ հավաքարարներ |
| 8 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով կատարելագործել կաբինետային համակարգը, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան: | ուստարվա ընթացքում | տնօրեն, ՄԿԱԳդասղեկներ, ՏԱԳՏ |
| 9 | Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով դասավանդող ուսուցիչների կողմից քննարկումներ և զեկույցներ ներկայացնել | | ՄԿԱԳ ՈՒԱԳՏ ուսուցիչներ |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Բոլոր առարկաների դասաժամերին նոր տեխնոլոգիաների կիրառմամբ` շրջված դասարանով դասապրոցեսների կազմակերպում և քննարկում | | ՄԿԱԳ ՈՒԱԳՏ ուսուցիչնե ր |
| 11 | Հատուկ ուշադրություն դարձնել առարկայական ծրագրերի կատարմանը և դրանց յուրացման որակին էլեկտրոնային փաստաթղթերում | | ՈՒԱԳՏ |
| 12 | Օգնել դասղեկներին` ժամանակին կազմելու կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանները, դասղեկի ժամերի թեմատիկան և հետևել նախատեսված միջոցառումների կատարմանը: | մինչև սեպտեմբերի 10-ը | ՄԿԱԳՏ |
| 13 | I դաս. աշակերտների համար կազմակերպել օնլայն ցերեկույթ նվիրված նոր ուստարվան, նույն ցերեկույթում էլ անցկացնել <<Ա>> տառի թագադրումը: | հոկտեմբեր | դասվարներ, դասվարական մ/մ,ԴԱԿ ՄԿԱԳ |
| 14 | Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ հանրապետության տարբեր վայրեր, հանդիպումներ այլ դպրոցների սովորողների հետ ըստ ԿԳՄՍՆ-ի կողմից տրամադրված ուղղեցույցի | սեպտեմբեր-նոյեմբեր<br><br>ապրիլ-մայիս | տնօրեն ՄԿԱԳՏ ԴԱԿ դասղեկներ |
| 15 | Անցկացնել վարվեցողության կանոնների յուրացման պարապմունքներ I-V, VI-IX դասարանների աշակերտների համար օնլայն եղանակով, դրանք ուղեկցելով գործնական կիրառություններով դասապրոցեսի ժամանակ: | տարվա ընթացքում նոյեմբեր մարտ | դասվարներ, դասղեկնր |

| | | | |
|---|---|---|---|
| 15 | Հաստատության շենքը, գույքն ու սարքավորումները խնամքով պահպանելու նպատակով դպրոցի աշակերտների համար անցկացնել զրույցներ | սեպտեմբեր փետրվար | ՄԿԱԳ տնօրենի տեղակալ, դասվարներ, դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | Սովորողների համար կազմակերպել և անցկացնել հետևյալ զրույց-հանդիպումները.<br>1. Աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որոկներ, ինչպիսիք են՝ կամավորությունը, համագործակցությունը, մասնակցությունը, հանդուրժողականությունը<br>2. Կազմակերպել զրույցներ՝ հաշվի առնելով աշակերտների նախաձեռնությունները, ստեղծագործական տաղանդները<br>3. Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը<br>4. Կազմակերպել հանդիպումներ ն/կ ծնողների և համապատասխան մասնագետների հետ<br>5. Հանդիպում բժշկի հետ<br>6. Ստեղծել և ապահովել հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալու աշակերտին ազատ արտահայտվել<br>7. Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ<br>8. Պարբերաբար կազմակերպել շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում<br>9. Նպաստել և աշխատանքներ տանել ազգային փոքրամասնությունների, լեզվի և մշակույթի զարգացման, իրավունքների իրականացման ուղղությամբ<br>10. Հանդիպում մշակույթի բնագավառի գործիչների հետ /դերասան, նկարիչ, գրող, երաժշտագետ, արվեստագետ/<br>11. Ամսվա ընթացքում դասղեկական ժամերից մեկը տրամադրել <<Աղետների և ռիսկերի նվազեցման>> կրթությանը<br>12. Հանդիպում ավագ դպրոցի ղեկավարության հետ /IX դաս./<br>13. Դասղեկական բաց դաս <<Ազգային հպարթություն>> թեմայով | ուստարվա ընթացքում | ՈՒԱԳ<br><br>ՄԿԱԳ<br><br>դասվարներ,<br><br>դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | Հետևողական աշխատանք տանել ներառական կրթության գործընթացի նկատմամբ: | | |
| 18 | Վերանորոգել հին գույքը | | ՏԱԳՏ |
| 19 | Կանոնավոր կերպով անցկացնել առողջարարական դասամիջոցներ, մարմնակրթական դադարներ /պայմանների առկայության դեպքում/: | ամեն օր | ՄԿԱԳՏ, ՈՒԱԳՏ, ՏԱԳՏ, դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ |
| 20 | Տարբեր մարզաձևերից կազմակերպել միջդասարանական մրցումներ, անցկացնել սպորտլանդիաներ, ռազմահայրենասիրական խաղեր՝ առկա ուսուցման ժամանակ: | ուստարվա ընթացքում | ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ ՄԿԱԳՏ |
| 21 | Կազմակերպել հանդիպումներ Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանատարների, Ղարաբաղի պաշտպանության մարտերում աչքի ընկած զինվորների ու սպաների հետ՝ առկա ուսուցման ժամանակ : | ուստարվա ընթացքում՝ հունվար, մայիս | ՄԿԱԳՏ, զինղեկ, դասղեկներ |
| 22 | Անցկացնել ցերեկույթներ մարզական և մշակութային միջոցառումներ նվիրված ՀՀ անկախության օրվան՝ առկա ուսուցման ժամանակ: | անկախութ. օրը սեպտեմբերի 21-ին | ՄԿԱԳՏ ԴԱԿ դասղեկներ, |
| 23 | Հաշմանդամների պաշտպանության միջազգային օրվա արթիվ կազմակերպել միջոցառումներ՝ առկա ուսուցման ժամանակ : | դեկտեմբերի 3 | |
| 24 | <<Հիշատակի օր >> | դեկտեմբերի 7 | |
| 25 | Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ | դեկտեմբերի վերջին տասնօրյակ | ՄԿԱԳՏ, ԴԱԿ դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 26 | Իրավական դաստիարակության նպատակով սովորողներին ծանոթացնել միջազգային կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքներին, այդ և այլ նպատակով նաև կազմակերպել հանդիպումներ ճանաչված իրավաբանների հետ | ուստարվա ընթացքում | ՄԿԱԳՏ, պատմության ուսուցիչ |
| 27 | Հանրակրթության մասին օրենքի, դպրոցի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների պահանջներին համապատասխան, կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ / ինքնասպասարկում, դասարանի կահավորում, վերանորոգում և այլն/: | ուստարվա ընթացքում | դասղեկներ |
| 28 | Անցկացնել միջոցառումներ նվիրված նշանավոր գրողների, գիտնականների, հասարակական, քաղաքական գործիչների հոբելյանական տարելիցներին : | ուստարվա ընթացքում՝ ըստ ծննդյան ամիսների | ՄԿԱԳՏ, մ/մ-ների ուսուցիչներ |
| 29 | Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույցներ սովորողների օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի վերաբերյալ: | տարեկան 2 անգամ | բուժքույր |
| 30 | Ուսումնասիրել սանհիգիենիկ նորմերի պահպանման վիճակը ինքնասպասարկման պայմաններում՝ I-IX դասարաններում:Կատարել ամենօրյա ախտահանման աշխատանքներ դպրոցի բոլոր տարածքներում: | ամիսը 1 անգամ /վերջին տասնօրյակ/ | բուժքույր դասղեկներ |
| 31 | 1-9-րդ դասարանների սովորողների համար հաճախակի կազմակերպել զրույցներ ճանապարհային երթևեկության կանոնների, հետիոտնի պարտականությունների և իրավունքների վերաբերյալ | յուրաքանչյուր կիսամյակում 2 անգամ | դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 32 | Ստուգել ծրագրային նյութերի և ուսումնական առարկաների թեմատիկ պլանավորման վիճակը էլեկտրոնային հարթակներում: | 10-15/09 | ՈՒԱԳՏ |
| 33 | Յուրաքանչյուր ամսվա վերջին հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | տարվա ընթացքում | տնօրեն, դասղեկներ , ՈՒԱԳՏ և ՄԿԱԳՏ |
| 34 | Ստուգել հիմնական պարտադիր կրթության կատարման վիճակը դպրոցում պետական կրթական չափորոշիչով նախատեսված գիտելիքների յուրացման, ինչպես նաև որակյալ կրթության ապահովման նպատակով՝ելնելով հանրակրթական հաստատության կանոնադրության, <<Հանրակրթության>> և <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | նոյեմբեր<br>մարտ | տնօրեն ՈՒԱԳՏ և ՄԿԱԳՏ, դասղեկներ |
| 35 | Մ/մ-ների օգնությամբ ստուգել դասի ընթացքում ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման վիճակը: | դեկտեմբեր-ապրիլ | ՈՒԱԳՏ, մ/մ-ների ղեկավար ներ |
| 36 | Ստուգել V-IX դասարաններում գնահատման բաղադրիչներով տրվող աշխատանքների քանակը և որակը՝ արդյունքները քննարկել մ/մ-ների նիստերում : | Կիսամյակն-երի վերջում | ՈՒԱԳՏ, մ/մ-ների ղեկավար ներ |
| 37 | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում : | նոյեմբեր մարտ | տնօրինությ ուն, մ/մ-ների ղեկավարնե ր |
| 38 | Ստուգել էլեկտրոնային դասամատյանների վարման վիճակը: | պարբերաբար երկու ամիսը 1 անգամ | ՈՒԱԳՏ, ՄԿԱԳՏ, դասղեկներ |

## Աշխատանք ծնողների հետ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել դասարանական խորհրդի անդամներ և նախագահներ: | սեպտեմբերի | ՈՒԱԳՏ, ՄԿԱԳՏ, դասղեկ ներ, դասվա րներ |
| 2 | Դասարանների ծնողխորհուրդների մասնակցությամբ կազմակերպել և անցկացնել ծնողական ժողովներ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր: | սեպտեմբեր մարտ | տնօրեն ՈՒԱԳՏ և ՄԿԱԳՏ, ծնող խորհրդի նախագահ |
| 3 | Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ, նրա անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրության հետ: | սեպտեմբերի 1-10 | Տնօրեն , ՈՒԱԳՏ և ՄԿԱԳՏ |
| 4 | Կազմել ծնողների հետ անցկացվող զրույցների ու զեկուցումների թեմատիկ պլան.<br>1. <<Միջավայրի արագ փոփոխությունը և երեխայի դաստիարակության գործընթացը որպես օրախնդիր հարց>>:<br>2. <<Ծնողական համալսարանը երեխայի դաստիարակույթան գործում, ծնողին օգնելու կարևորագույն միջոց>>:<br>3. <<Օրվա և շաբաթվա ռեժիմի գիտականորեն կազմելը կարևորագույն խթան՝ երեխայի ուսուցում և դաստիարակությունը միշտ կազմակերպելու համար>>: | սեպտեմբեր<br><br>նոյեմբեր<br><br>մարտ | ՄԿԱԳՏ, դասղեկներ, դասվարներ |
| 5 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | ուստարվա ընթացքում | Տնօրեն, ծնող խորհրդի նախագահ |
| 6 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման համար: | ուստարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱԳՏ |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին: | պարբերաբար | ՄԿԱԳՏ, դասղեկներ |

**Ֆինանսատնտեսական գործունեության և ուսումնանյութական բազայի ամրապնդում**

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Կազմել տարիֆիկացիան | սեպտեմբեր | Տնօրեն |
| 2 | Կազմել ծախսերի նախահաշիվ, բյուջետային հատկացումների փաստաթղթերը ներկայացնել հաստատման: | ֆինանսական տարվա անհրաժեշտ ժամանակա-հատվածում | տնօրեն գլխ. հաշվապահ |
| 3 | Ժամանակին ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի հաստատմանը՝ շենքի վերանորոգման և գույքի ձեռք բերման և այլ նպատակով համապատասխան ծախսերի նախահաշիվը : | ուստարվա անհրաժեշտ ժամանակա-հատվածում | տնօրեն |
| 4 | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսուցման տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | Տնօրեն ՏԱԳՏ ՄԿԱԳ դասղեկներ |
| 5 | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում: | նոյեմբեր դեկտեմբեր | ՏԱԳ տնօրենի տեղ. |
| 6 | Ապահովել շենքի լուսային, ջերմային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | ուստարվա ընթացքում | ՏԱԳՏ |

| | | | |
|---|---|---|---|
| **7** | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | ուստարվա ընթացքում | ՏԱԳՏ |
| **8** | Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ/ առկա ուսուցման դեպքում/ | տարվա ընթացքում | տնօրե ն ՄԿԱԳՏ, ՈՒԱԳՏ, ՏԱԳՏ, ծնողխորհուր դ |

## *Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ*

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի տնօրենի և տեղակալների միջև | 20-25/08 | տնօրեն |
| 2. | Կազմավորել դասարանները | 19-31/08 | տնօրինություն |
| 3. | Սահմանել աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթը | 20-29/08 | տնօրինություն |
| 4. | Ուսումնական պրոցեսը իրականացնել 1 հերթով: | 20-29/08 | տնօրեն |
| 5. | Նշանակել դասղեկներ և դասվարներ | 20-29/08 | տնօրեն |
| 6. | Նշանակել ուսումնական խմբակների ղեկավարներ /առկայության դեպքում/ | 20-29/08 | տնօրեն |
| 7. | Նշանակել մ/մ-ների ղեկավարներ | 20-29/08 | տնօրեն |
| 8. | Ուստարվա համար նախատեսել անհրաժեշտության դեպքում ձեռք բերելու ուսումնական գույք և սարքավորումներ | 20-31/08 | ՏԱԳ տնօրենի տեղակալ |
| 9. | Սովորողներին նախապատրաստել ուսումնական տարվա սկզբին | 30-31/08 | դասղեկներ դասվարներ |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Կարգավորել սովորողների և անձնակազմի անձնական գործերը էլեկտրոնային եղանակով | 25-31/08 | դասղեկներ դասվարներ |
| 11. | Լրացնել և գործածության մեջ դնել էլեկտրոնային դասամատյանները: | սեպտեմբերի սկիզբ | դասղեկներ դասվարներ |
| 12. | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ՝ յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ, յուրաքանչյուր ամսվա վերջին խորհրդակցությունում քննարկել անցած ամսվա կատարած աշխատանքները, հաստատել եկող ամսվանը: | ուստարվա ընթացքում | տնօրեն |
| 13. | Հրավիրել VI-IX դասարանի սովորողների ընդհանուր ժողով, որի ընթացքում՝ ա/ ընդհանուր ժողով ձևավորել աշակերտական գործադիր մարմին՝ խորհուրդ բ/ օրինակելի կանոնադրության հիման վրա հաստատել դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրությունը գ/ հաստատել աշակերտական խորհրդի կազմը | սեպտեմբերի 1-ին շաբաթ | Տնօրեն ՄԿԱԳՏ ԴԱԿ |
| 14. | Մշտական աջակցություն ցուցաբերել աշխորհրդին | ուստարվա ընթացքում | ՄԿԱԳՏ, ՈՒԱԳՏ, ԴԱԿ |
| 15. | Սովորողների հերթական ընդհանուր ժողովի հրավիրում: | տարեկան 2 անգամ | աշխորհրդի նախագահ, ՄԿԱԳՏ ԴԱԿ |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | Աշակերտական խորհրդի գործունեության հիմնական խնդիրները համարել՝<br>ա/ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը<br>բ/ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների ամրապնդմանն ու զարգացմանը նպաստելը<br>գ/ դպրոցում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը<br>դ/ սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը<br>ե/ երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը,<br>զ/քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը: | ուստարվա ընթացքում | աշխորհուրդ<br>ՄԿԱԳՏ<br>ԴԱԿ |